

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԻՐԱԿԻ 6 ՅՈՒՆԻՍ, 2010

Շաբաթաթերթ ժ. Տարի Թիւ 19

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ

Ա Մ Ա Ռ Ն Ա Յ Ի Ն Ս Ո Ւ Ր Բ
Գ Ր Ո Ց Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

5 ՅՈՒԼԻՍ – 6 ՕԳՈՍՏՈՍ, 2010



ԱՌՕՐԵԱՅ ՅԱՅՏԱԳԻՐ՝ Պաշտամունք, Անգլերէն լեզուի դաս, Հայոց պատմութիւն, Ս. գրային պատմութիւն, Ազգային եւ Հոգեւոր երգեր, Ընդհանուր զարգացում, Խաղեր (դաշտային եւ խմբային), Պտույտներ, Այցելութիւններ Հալէպի տեսարժան վայրերու, Cooking, Աւագանագնացութիւն, Ձեռնային աշխատանք, Տեսաերիզի ցուցադրութիւն եւ Video Clip-ի պատրաստութիւն եւ ցուցադրութիւն:



Արձանագրութեան սակ՝ 1200 ս.ո., օթոքար՝ 800 ս.ո
Տարիք՝ 4-12
Կարողի ժամեր՝ առաւօտեան ժամը՝ 9.00-1.00
Վայր՝ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի "Քրիստոնէական Դաստիարակութեան կեդրոն"



* Արձանագրութիւնները կատարել 15 ՅՈՒՆԻՍ, 2010-ին սկսեալ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի Գրասենեակ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի Հոգաբարձութեան եւ Խնամակալութեան, որոնք հիւրասիրեցին եկեղեցիին ժողովուրդը, Կիրակի 30 Մայիս, 2010-ին, քարոյի պաշտամունքէն ետք, Եկեղեցիի Հովիւին՝ Վեր. Յարութիւն Սելիմեանի 10 տարիներու վերընտրութեան ուրախ առիթով:

Rev. Haroutune Selimian
Armenian Evang. Bethel Church
Tel. & Fax 4642450
Aleppo- Syria

القس هاروتيون سليميان
كنيسة بيت ايل للأرمن البروتستانت
هاتف و فاكس 4642450
حلب - سورية

Հովիւ՝ Վեր. Յարութիւն Տ. Սելիմեան
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ
Հեռաձայն՝ 4467528, Հեռատիպ՝ 4642450
E-mail: armani@net.sy
Հալէպ-Սորիա

ԳՈՐԾԸ ԿԸ ՊԱՇՏԵՍ ԹԷ ԶԱՍՏՈՒԱԾ

«Վասն զի մենք Աստուծոյ գործակից ենք. դուք Աստուծոյ մշակութիւնն էք, Աստուծոյ շինութիւնն էք»: (Ա. Կորնթ. 3.9)

Զգուշացիր Աստուծոյ համար կատարած որեւէ տեսակ գործէ, որ Աստուծոյ վրայ կեդրոնանալէ կ'արգիլէ քեզ: Այսօր բազմաթիւ հոգեւոր մշակներ կան, որոնք իրենց գործերը կը պաշտեն: Քրիստոնէայի հոգեւոր գործիչներու միակ հետաքրքրութիւնն ու մտահոգութիւնը, Աստուծոյ վրայ կեդրոնանալ ըլլալու է: Այս պիտի նշանակէ, որ կեանքի արգելքները, ըլլան անոնք մտային, բարոյական կամ հոգեւոր սահմանափակումներ ամբողջապէս ազատ են, այն ազատութեամբ, որ Աստուած կը շնորհէ իր զաւակներուն: Այն գործակիցը որ անգոյշութիւն կ'ընէ Աստուծոյ վրայ կեդրոնանալու շեշտաւորումով, յանկարծ բեռնաւորուած կը զգայ իր գործերով: Անիկա ծառան է իր սեփական սահմանափակումներուն եւ ձեռքազատուած՝ որեւէ տեսակի մարմինի, մտքի եւ հոգիի ազատութենէ: Ծարունակաբար, անիկա ամբողջապէս սպառած եւ յաղթուած կը ներկայանայ կեանքին: Կեանքի մէջ ոչ ազատութիւն եւ ոչ ուրախութիւն կայ այդպիսիներուն համար: Անոնց ջղային դրութիւնը, միտքն ու սիրտը այնքան բեռնաւորուած կ'ըլլայ, որ Աստուծոյ օրհնութիւնները չեն կրնար հանգստացնել զանոնք:

Սակայն, հակառակ դէպք հաւասարապէս ճշմարիտ է: Երբ մեր կեդրոնացումը Աստուծոյ վրայ ըլլայ, մեր կեանքի բոլոր սահմանափակումները

կ'ազատագրուին եւ միմիայն Աստուծոյ տիրութեան եւ հսկողութեան տակ կը մտնեն:

Այլեւս որեւէ աշխատանքի եւ գործի պատասխանատուութիւն բերցուած չէ քու վրայ: Միակ պատասխանատուութիւնը որ դրուած է, այն ալ մնայուն կերպով Աստուծոյ հետ կապի մէջ մնալ է, եւ տեսնել, թէ՛ չես արտօներ ոչ մէկ բան արգելք ըլլալու, քու եւ Աստուծոյ միջեւ տեղի ունեցած գործակցութեան: Սրբագործումէ ետք մեզի հասած ազատութիւնը երեխայի մը ունեցած ազատութիւնն է, եւ այն բաները որոնք կաշկանդելով կեանքդ քեզ ամբողջապէս վար կը քաշէին, անոնք այլեւս չկան: Սակայն զգուշ, պէտք է յիշել, որ դուն ազատ արձակուեցար մէկ եւ միայն մէկ բանի համար, ըլլալ ամբողջապէս նուիրուած եւ հաւատարիմ քու գործակիցին:

Մենք իրաւունքը չունինք որոշելու, թէ՛ Աստուած ինչ եւ ինչպէս պիտի ընէ մեր կեանքին մէջ, եւ կամ նախապաշարուելու որոշ աշխատանքային փափաքելի երազներով: Հաւատանք, յիշենք եւ յիշեցնենք թէ՛ Աստուած ինք կը տնօրինէ ամէն բան եւ ինչ որ կ'որոշէ մեզի համար, այդ բարի հաճելի եւ կատարեալ է, ամբողջական նուիրումի կեանքին մէջ: **«Չեղքդ ինչ որ գտնէ ընելու, բոլոր ուժովդ ըրէ...» (Ժող. 9.10):**

Վեր. Յարութիւն ճ. Սելիմեան

Ք.Զ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կիրակի 30 Մայիս, 2010–ին, պաշտամունքը սկսաւ Օր. Սեւան Չիրիշեանի բարի գալուստի խօսքով: Ապա ջանիցականներ դիտեցին դաստիարակչական տեսաերիպ « *Time changer* » խորագիրով, ուրտեղ ժամանակի յառաջացման, փոփոխութեան ու վարձացման մէջ մարդոց հետաքրքրութիւնները, եւ անոնց անտարբերութիւնը Աստուծոյ ու անոր պատուիրանքներուն հանդէպ: Պաշտամունքը վերջ գտաւ նուիրահաւարումով, յայտարարութիւններով եւ Տէրունական աղօթքով: Աւարտին տեղի ունեցաւ հաղորդակցական պահ:

ՏԻԿՆԱՆՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Չորեքշաբթի 2 Յունիս, 2010–ին, Տիկնանց պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Տիկ. Անի Մարաշլեան՝ 51-րդ սաղմոսի ընթերցումով, երգեցողութեամբ, եւ փոխառաց ընթերցումով ու հոգեւոր

խորհրդածութիւնով՝ «Աղօթքի կարեւորութիւնը» խորագրով: Օրուն երաժշտական նիւթը ներկայացուց՝ Տիկ. Շողակաթ Սելիմեան: Ան վեր առաւ երեք երաժշտներու կեանքին ու գործերուն մասին՝ Կոմիտաս Վարդապետ (Սողոմոն Սողոմնեան), Արմէն Տիգրանեան եւ Արամ Խաչատուրեան: Պաշտամունքը վերջ գտաւ յայտարարութիւններով, նուիրահաւարումով եւ Տէրունական աղօթքով: Աւարտին տեղի ունեցաւ հաղորդակցական պահ եւ հիւրասիրութիւն:

ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵՌԷԼ ԵԿԵՂԵՑԻ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ
Կատարողութեամբ՝
Հայ Արեւ. «Արտս» Երաժշտութ. Աւաւերստերու
Տեղի կ'ունենայ Կիրակի 13 եւ 20 Յունիս, 2010,
Երեկոյեան ժամը՝ 6.30–ին,
Հայ Աւետ. Բերէլ Եկեղեցիի Սողոմոնեան եւ Փօլատեան սրահներէն ներս:
Ծանօթ: Տոմսերը ապահովել երաժշտանոցի Բարսուղարութիւնն է

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ

Կիրակնօրեայ դպրոց.....	Ժամը՝ 9:30-ին
Պատանի Ապետ Ա. Խումբ.....	Ժամը՝ 9:30-ին
Առաւօտեան քարոյի պաշտամունք.....	Ժամը՝ 10:00-ին
Ք.Զ. Երիտասարդաց.....	Ժամը՝ 12:00-ին

ՀԱՔԱԹԱՄԻՋԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ

Տիկնանց Միութիւն.....	Չորեքշաբթի ժամը՝ 10:00-ին
Աստուածաշունչի սերտողութիւն.....	Ուրբաթ ժամը՝ 8:30-ին
Պատանի Ապետ Բ. Խումբ.....	Շաբաթ ժամը՝ 6:30-ին

ներկայացնենք: Ճշմարիտ աղօթքը, Աստուծոյ կատարել լիքը ըսել չէ, հապա խնդրել Աստուծմէ, որ իր կամքը կատարէ մեր մէջ եւ մեր միջոցով: Այլ խօսքով կը նշանակէ Աստուծոյ կամքը կատարել երկինքի մէջ: Եւ վերջապէս անոնք չաղօթեցին որպէս զի վիճակները փոխուին եւ իրենց թշնամիները փուլ գան: Հապա Աստուծմէ խնդրեցին, որ զօրութիւնով ներշնչէ զիրենք, կարենալ իրենց վիճակներուն մէջ լաւագոյն ձեւով դուրս գալու (Գործք. 4.28):

Այս ճակատագրականութիւն չէ, հապա հաւատք՝ պատմութեան Տիրոջ վրայ, որ կատարեալ ծրագիր ունի եւ յաղթական միջոցներ՝ մարդուն կեանքին եւ զինք շրջապատող կացութիւններուն վրայ: Անոնք Աստվածային միջամտութեան դիմեցին եւ ոչ փախուստի: Շարունակաբար, Աստուած անոնց տուաւ այն զօրութիւնը, որուն պէտք ունէին:

Մի աղօթք հեշտ կեանքի համար, հապա աղօթեցէք զօրաւոր այրեր եւ կիներ ըլլալու համար: Մի աղօթք գործերու եւ պաշտօններու, որոնք հաւասար են ձեր ոյժին, հապա աղօթեցէք այնպիսի զօրութեան համար, որ հաւասարի ձեր ծառայութիւններուն եւ աշխատանքին: Այս է այն աղօթքի ձեւը, որու հետեւեցան առաջին դարու քրիստոնէաները: Եւ այս է այն ձեւը, որու պիտի հետեւի Աստուծոյ ժողովուրդը՝ այսօր:

Վեր. Յարութիւն ճ. Սելիմեան

Ք.Զ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կիրակի 6 Յունիս, 2010-ին, պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Օր. Սեւան Բէլէշեան՝ երգեցողութեամբ, աղօթքով եւ հոգեւոր խորհրդածութիւնով՝ «Ներողամտութիւն» խորագրով: Օրուան պատգամը փոխանցեց եկեղեցիիս հովիւը: Ան վեր առաւ հոգեւոր խումբի միասնականութեան չափանիշներուն մասին, անդրադառնալով չորս հիմնական կէտերու: Պաշտամունքը վերջ գտաւ նուիրահաւարումով, յայտարարութիւններով եւ բաժանման աղօթքով:

ՏԻԿՆԱՆՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Չորեքշաբթի 9 Յունիս, 2010-ին, Տիկնանց պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Տիկ. Կիւլէն Մերիօշեան՝ 27-րդ սաղմոսի ընթերցումով, երգեցողութեամբ, 20-րդ փոխառաց ընթերցումով փոխադարձաբար կարդալով եւ աղօթքով: Օրուան պատգամը մատուց Տիկ. Հուրի Մուսա Օղլի, նիւթ ունենալով՝ «**Միջավայրի ապրեցողութիւնը եւ ճնշումը**»: Ան անդրադարձաւ դրական եւ ժխտական ճնշումներուն մասին, ինչպէս նաեւ անոնց ապրեցողութիւնը մեր կեանքի ընթացքին ապա Ս. Գրային համարներու մէջբերումով եպրակացուց,

թէ՛ մենք պէտք է քաջալերենք մեր անձերը յաջող ընթացքի մէջ պահելու, Տէր Յիսուս Բրիստոսի օրինակին հետեւելով: Պաշտամունքը վերջ գտաւ յայտարարութիւններով, նուիրահաւարումով եւ Տէրունական աղօթքով: Աւարտին տեղի ունեցաւ հաղորդակցական պահ եւ հիւրասիրութիւն:

ԵԿԵՂԵՑԻՍ ԶՈՅԳԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՊՏՈՅՏ

Շարք 29 Մայիս, 2010-ին, Հայ Աւետ. Բեթլ Եկեղեցիի Զոյգերու Յանձնախումբին կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ Միօրեայ պտոյտ: 11 փոյգեր առաւօտեան ժամը՝ 1.30-ին, եկեղեցիիս հովիւին առաջնորդութեամբ ու աղօթքով ուղղուեցան դէպի պատմական Հայաստան: Պտոյտը ընթացաւ որպէս առաջին հանգրուան եղաւ Մարաշ գիւղաքաղաքի այցը, հաւաքական նախաձաշ ունենալէ ետք, խումբը առիթը ունեցաւ այցելելու Մարաշի բերդը, որ ներկայիս բաւական փոփոխութիւններու ենթարկուած է: Շրջապտոյտը շարունակուեցաւ դէպի Այնթապ, ուրտեղ այցելեցին հայկական եկեղեցիներ, որոնցմէ մէկը արդէն վերածուած է մկկիթի: Վեր. Յ. Սելիմեանի աղօթքով խումբը ունեցաւ հաւաքական ձաշ, որմէ ետք այցելութիւն տրուեցաւ Այնթապի Գոլէճը եւ Գարամանուկեան բնակարանը, որ այժմ թանգարանի վերածուած է: Հաւաքական ընթրիքէն ետք խումբը վերադարձաւ Հալէպ Աստուծոյ առաջնորդութեամբ, երեկոյեան ժամը՝ 12.00-ին, բարձր տրամադրութեամբ եւ վերանորոգուած մեր արմատներով: Աստուծոյ փառք կուտանք այս պատեհ առիթին համար:


ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ

ԱՄԱՌԵԱՅԻՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՎԱՐԺԱՐԱՆ

5 ՅՈՒԼԻՍ – 6 ՕԳՈՍՏՈՍ, 2010

Վայր՝ Հայ Աւետ. Բեթլ Եկեղեցիի Բրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոն

* Արձանագրութիւնները կատարել 15 ՅՈՒՆԻՍ, 2010-էն սկսեալ Հայ Աւետ. Բեթլ Եկեղեցիի Գրասենեակ



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ

Ա Մ Ա Ռ Ն Ա Յ Ի Ն Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ո Ց Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

5 ՅՈՒԼԻՍ – 6 ՕԳՈՍՏՈՍ, 2010



Արձանագրութեան սակ՝ 1200 ս.ո., օթոցար՝ 800 ս.ո
Տարիք՝ 4-12
Դպրոցի ժամեր՝ առաւօտեան ժամը՝ 9.00-1.00
Վայր՝ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի "Քրիստոնէական
Դաստիարակութեան կեդրոն"

* Արձանագրութիւնները կատարել Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի Գրասենեակ:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ ՏԵՂԵԿԱՍՈՒ

ԿԻՐԱԿԻ 20 ՅՈՒՆԻՍ, 2010

Շաբաթաթերթ ժ. Տարի Թիւ 21

ՃՇՄԱՐԻՑ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ

(Մատթ. 6.1-6)

ՀԱՅ ԱՒԵՏ. ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՇՆՈՐՀԱԻՈՐԷ ԵԿԵՂԵՑԻԻՍ
ՉԱԻԱԿՆԵՐԷՆ ԵՒ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԳՐՈՑԻ ՓՈՔՐԻԿՆԵՐԷՆ, ՈՐՈՒՔ
ԱԻԱՐՏԵՑԻՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԻ
ԵՒ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ



Մանկապարտէս

Հուրի Այվապեան, Մէրլի Մուտարիկեան, Բերլա Խաչքրպեան, Մեղեղի
Իսկէնտէրեան, Յարութ Իշխանեան, Բենիամին Հեքիմեան, Հայկ
Գասարճեան, Զաւէն Նէնէճեան եւ Ռիքարտո Եագուպ:



Նախակրթարան

Արմանի-Հերա Սելիմեան, Լորա Պալապանեան, Նաթալի
Մուտարիկեան, Վարդի Թորոյեան, Էօժէնի Պոնոնյեան, Յովսէփ
Հելվաճեան, Վրէժ Ներսէսեան, Յովիկ Լահուօ, Յովիկ Սապունճեան,
Զօհրապ Մանուկեան, Պարգեա Եաղճեան եւ Անդրանիկ Արզարեան:

Rev. Haroutune Selimian
Armenian Evang. Bethel Church
Tel. & Fax 4642450
Aleppo- Syria

القس هاروتيون سليميان
كنيسة بيت ايل للأرمن البروتستانت
هاتف و فاكس 4642450
حلب - سورية

Հովիւ՝ Վեր. Յարութիւն Ճ. Սելիմեան
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ
Հեռաձայն՝ 4467528, Հեռատիպ՝ 4642450
E-mail: armani@net.sy
Հայկա-Մարիա

Ճշմարիտ արդարութիւնը Տէր Յիսուսի Թագաւորութեան մէջ պէտք է
գործադրութեան դրուի կեանքի տարբեր գործունէութիւններուն մէջ:

Մատթ. 6. 1-4 համարներուն մէջ կը հանդիպինք ճշմարիտ տուչութեան մասին:
Աղքատին օգնելը, աղօթքի կեանքը եւ ծոմապահութիւնը կարեւոր
կարգապահական արարքներ էին Փարիսեցիներուն համար: Տէր Յիսուս
չ'անարգեց այս կարգապահութիւնը, սակայն Ան Վգուշացուց մեզ, որ
վերանայում ընենք մեր սրտին ո՞ր ըլլալուն մասին, երբ նման
գործունէութիւններու մէջ ըլլանք:

Փարիսեցիներ նուիրատուութիւնը կը շահագործէին պատիւ եւ փառք
շահելու համար, ինչ որտեղ սխալ շարժառիթ կը նկատուի: Տուածիդ քանակը
ինչ որ է, տակաւին փրկութիւն կարելի չէ գնել անով, վասնպիսի փրկութիւնը
Աստուծոյ պարգեւն է (Եփես. 2.8-9): Շարունակաբար, մարդոց վերագրուած
փառքին համար ապրիլը յիմառութիւն է, որովհետեւ մարդուն փառքը երկար
կեանք չունի (Ա. Պետրոս 1.24):

Իսկութեան մէջ ինչ որ արժէք ունի եւ մնայուն է, Աստուծոյ վերագրուած
փառքն ու պատիւնն է: Մեր տկար եւ մեղաւոր բնութիւնը այնքան իշխող է, որ
նոյնիսկ երբ բարի գործ ընենք վայն կ'անպատուէ, մեր մէջ յառաջացնելով
սխալ շարժառիթ: Արեւորը այն է, որ մեր շարժառիթը ըլլայ մաքուր եւ
արդար, հոգ չէ թէ երբ կուտանք գաղտնի կամ յայտնի կերպով: Բառնաբան՝ իր
հողը ծախեց եւ յայտնօրէն անոր գումարը առաքեալներուն բերաւ (Գործք
4.34): Երբ որ Եկեղեցիի անդամները իրենց նուէրները առաքեալներուն

ուրբերուն քով կը դնէին, գաղտնի չէին ընել, ամէն մարդ կը տեսներ, բայց անոնց շարժառիթը մաքուր էր եւ արդար:

Հետեւաբար, այսօր Եկեղեցին կարելու է որ իմանայ, թէ՛ երբ կուտայ գաղտնի կամ յայտնի կերպով, տայ մաքուր եւ շիտակ շարժառիթով ու ձեռով:

Վեր. Յարութիւն ճ. Սելիմեան

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԵՒ ՊԱՏԱՆԻ-ԱՍՊԵՏ Բ. ԽՈՒՄԲԻ ՇՐՋԱՆԱՐԱՐՏԻՑ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կիրակի 13 Յունիս, 2010-ին, եկեղեցիիս կիրակնօրեայ քարոյի պաշտամունքը իւրայատուկ էր: Պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Տիար Սամուէլ Մնչերեան: Ապա տեղի ունեցաւ կիրակնօրեայ դպրոցի եւ պատանի-ասպետ Բ. խումբի շրջանաւարտից պաշտամունքը: Փոքրիկներ ներկայացուցին յատուկ յայտագիր մը որ կ'ընդգրկէր՝ երգչախումբ, վկայութիւն, Ս. Գրային համարներու ընթերցում եւ 2009-2010 տարեշրջանի կիրակնօրեայ դպրոցի տեղեկագրի ընթերցում: Ապա հովիւը շրջանաւարտներուն նուիրեց աստուածաշունչ մատենանը, որմէ ետք մատուց նուիրման աղօթք շրջանաւարտներուն եւ յորդոր անոնց ծնողներուն համար: Օրուան պատգամը մատուց հովիւը, վեր առնելով՝ «ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԻՐ ՏԻՐՈՋ ԿԸ ԿԱՆՉԷ» նիւթը, հիմնուած՝ Գործք. 4.23-31: Պաշտամունքը վերջ գտաւ նուիրահաւաքումով, յայտարարութիւններով, Տէրունական աղօթք՝ «Հայր Մեր»-ի երգեցողութեամբ եւ հովիւին առաքելական օրհնութեան աղօթքով: Կը շնորհաւորենք շրջանաւարտները եւ Աստուծոյ առաջնորդութիւնը կը խնդրենք անոնց կեանքին համար:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՀԱԻԱՔՈՅՈՒ -ՊՏՈՅՏ

Երեքշաբթի 15 Յունիս, 2010-ին, կիրակնօրեայ դպրոցի ուսուցչակազմին ծրագիրով, տեղի ունեցաւ ամսավերջի հաւաքոյթ-պտոյտ «ՄԵՊԻԼ» Համալիրէն ներս: Առաւօտեան ժամը՝ 11.00-ին, թիւով 50 փոքրիկներ մեծ խանդավառութեամբ մեկնեցան դէպի «ՄԵՊԻԼ» Համալիր ունենալու յատուկ ծրագիր: Անոնք ունեցան հաւաքական խաղեր եւ հաղորդակցական մտերմիկ պահ սպա ունեցան հիւրասիրութիւն: Կէսօրին փոքրիկներ վերադարձան տուն ապահով եւ ուրախ:

ԵԿԵՂԵՑԻՒՍ ՉՈՅԳԵՐՈՒ ՀԱԻԱՔ-ԸՆԹԻՔ

Կիրակի 13 Յունիս, 2010-ին, երեկոյեան ժամը՝ 8.30-ին, Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի Չոյգերու յանձնախումբին կապմակերպութեամբ տեղի ունեցաւ Հաւաք-ընթրիք, Եկեղեցիին Նստատեղին մէջ: Մոյն հաւաքին ներկայ էին՝ եկեղեցիիս յոյգերէն 22 յոյգեր իրենց վառակներով: Յայտագիրը սկսաւ եկեղեցիիս հովիւին բացման ու բարի գաղուստի խօսքով ապա յոյգեր ունեցան հաւաքական ընթրիք եւ հաղորդակցական մտերմիկ պահ: Հաւաքը վերջ գտաւ հովիւին աղօթքով: Աստուծոյ փառք կու տանք այս պատեհ առիթին համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Տիկ. Ալիա Սարեանին, որ հիւրասիրեց եկեղեցիին ժողովուրդը, **Կիրակի 13 Յունիս, 2010-ին,** քարոյի պաշտամունքին ետք, իր մօր մահուան յիշատակին:

ՎԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵԼԻՄԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԻ «ՖՐԵՏԵՈՖ ՆԱՆՍԷՆ» Ի ՈՍԿԵԱՅ ՅՈՒՇԱՄԵՏԱԼՈՎ

Ուրբաթ 11 Յունիս, 2010, կէսօրէ առաջ, Հայ Աւետարանական Բեթել Եկեղեցիի գրասենեակը ժամանեցին Հայաստանի «Ֆրետեոֆ Նանսէն Հիմնադրամ»ի հիմնարկին, հիմնադիր Նախագահ Տիար Ֆելիքս Բախչինեան, ընկերակցութեամբ՝ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս՝ Տիար Աշոտ Մանուկեանի եւ յարգարժան պատուիրակութեան: Մոյն այցելութեան նպատակն էր՝ պարգեւատրել Վերապատուելի Համայնքապետ Յարութիւն Սելիմեանը, իր փառահեղ ձեռքբերումներուն, արձանագրած յաջողութիւններուն եւ ի մասնաւորի հասարակական, քաղաքական, մարդասիրական սկզբունքներու հաստատման եւ հայոց ցեղասպանութեան դատապարտման ուղղութեամբ ծաւալած գործունէութեան համար: Տիար Ֆելիքս Բախչինեան շնորհակալութեան անգին խօսքերով շնորհաւորեց Վեր. Յարութիւն Սելիմեանը, իր տարած նախանձախնդիր ու արժանաւորեալ գործունէութեան համար, անոր փոխանցեց պարգեւատրման գիր եւ անոր լամբակը զարդարեց՝ մեծ մարդասէր, խաղաղութեան նուիրելեան մրցանակի դափնեկիր **Ֆրետեոֆ Նանսէնի** ոսկեայ յուշամետալով:



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ

Ա Մ Ա Ռ Ն Ա Յ Ի Ն Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ո Ց Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

5 ՅՈՒԼԻՍ – 6 ՕԳՈՍՏՈՍ, 2010



Արձանագրութեան սակ՝ 1200 ս.ո., օթոցար՝ 800 ս.ո
Տարիք՝ 4-12
Կարող ժամեր՝ առաւօտեան ժամը՝ 9.00-1.00
Վայր՝ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի "Քրիստոնէական
Դաստիարակութեան կեդրոն"

* Արձանագրութիւնները կատարել Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիի Գրասենեակ:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԻՐԱԿԻ 27 ՅՈՒԼԻՍ, 2010

Շաբաթաթերթ ժ. Տարի Թիւ 22

ԱՆՎԵՐԱՊԱՀ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

(Մատթ. 19:17-20:1-16)

Այս հատուածին մէջ կը տեսնենք, թէ՛ Պետրոս արագ էր նկատելու տարբերութիւնը հարուստ տանտէրին եւ աղքատ աշակերտներուն: «Ահա մենք ամէն բան թողուցինք եւ բոլորս եկանք քեզ, ուստի մեզի ինչ պիտի ըլլայ» (Մատթ. 19. 27):

Տէր Յիսուս անոնց տուաւ նախանձելի խոստում այս կեանքին եւ գալիք օրերուն համար: Որեւէ լաւ գործեր որոնք Տէր Յիսուսի սիրոյն կատարեցին՝ անոնց պիտի դառնար հարիւրապատիկ անգամ:

Տէր Յիսուս Պետրոսին հարցումին մէջ կը գուշակ ծառայութեան մէջ սխալ կեցուածքի կարելիութիւն: Այդ պատճառաւ, Տէր Յիսուս կ'աւելցնէ ազդարարութիւն մը, թէ՛ առաջինները պիտի ըլլան յետին, դատաստանի օրը, եւ յետինները առաջին:

Այս ճշմարտութիւնը բացայայտօրէն ընդգծուեցաւ այգիին մէջ գործող բանուորներուն առակով: Առակը փրկութեան հետ առնչութիւն ունեցող պատմութիւն չէ: Մէկ դահեկանը փրկութիւն չի ներկայացնէր, որովհետեւ ոչ մէկ մարդ իր փրկութեան համար կը գործէ: Ոչ ալ կը խօսի հատուցումի մասին, որովհետեւ մենք բոլորս ի վերջոյ նոյն հատուցումը պիտի չտանանք, հապա իրաքանչիւր մարդ իր գործին համաձայն:

Այս առակը կը շեշտէ ծառայութեան մէջ շիտակ կեցուածք ունենալ: Կարելի է նկատել, թէ՛ իրականութեան մէջ երկու տեսակի բանուորներ

Ի ՏԵՐՆ ՆԱԶԵՑ՝

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ՝ ԵՐԷՑՎԻՆ ՄԱՐԻ ՄԱՀՇԻՎԵԱՆ - ՄԱՐՄԱԶԵԱՆ ԾՆԵԱԼ՝ 1933-ԻՆ, ԲԵՍԱՊ

Յուդարկաւորութեան պաշտամունքը տեղի ունեցաւ Ուրբաթ 25 Յունիս, 2010, յետմիջօրէին ժամը՝ 4.00-ին, Բեսապի Հայ Աւետ. Ս. Երրորդութիւն Եկեղեցիին մէջ: Այս տխուր առթիւ Հովիւին եւ եկեղեցիի Հոգաբարձութեան անունով, ցաւակցութիւն կը յայտնենք եւ Սուրբ Հոգիին մխիթարութիւնը կը հայցենք անոր ընտանիքին, հարապատներուն եւ համայն Մահշիկեան, Սարմապեան եւ Մնչէրեան ընտանիքներուն:

Rev. Haroutune Selimian
Armenian Evang. Bethel Church
Tel. & Fax 4642450
Aleppo- Syria

القس هاروتيون سليميان
كنيسة بيت ايل للأرمن البروتستانت
هاتف و فاكس 4642450
حلب - سورية

Հովիւ՝ Վեր. Յարութիւն Ճ. Սելիմեան
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻ
Հեռաձայն՝ 4467528, Հեռատիպ՝ 4642450
E-mail: armani@net.sy
Հայէպ-Սորիա

կային գործի կանչում: Անոնք՝ որոնք համաձայնություն խնդրեցին եւ անոնք՝ որոնք առանց համաձայնութեան գործի լծուեցան, վստահելով գործի Տիրոջ բարիացակամութեան իրենց ստանալիք վարձքին նկատմամբ:

Քրիստոսի աշակերտներուն համար ստանալիք դասը յստակ էր: Պէտք չէ ծառայենք Տէրոջ որովհետեւ բան մը պիտի ստանանք անկէ: Աւելին՝ պէտք չէ պնդենք գիտնալու, թէ՛ ի՞նչ բան կարելի է ստանալ: Աստուած անհաւատալի կերպով առատաձեռն է եւ շնորհալի: Անիկա պիտի տայ իւրաքանչիւրին՝ մեր արժանիքէն աւելի ճոխ բաներ:

Այգեպանին բարի տրամադրութիւնը զանոնք խոստովանութեան չառաջնորդեց, հապա անոնց սրտին ճշմարիտ ցանկութիւնը: Ամէն անգամ որ կը հանդիպինք տրտնջող եւ զանգատող ծառայի, կը գիտնանք, թէ՛ ամբողջապէս եւ անվերապահօրէն յանձնուած չէ Տէրոջ կամքին:

Աստուծոյ փափաքն է որ անվերապահօրէն հնազանդութիւն ցուցաբերենք Իր երկնային կամքին նկատմամբ:

Վեր. Յարութիւն Ճ. Սելիմեան

ՏԻԿՆԱՆՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ

Չորեքշաբթի 16 Յունիս, 2010–ին, պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Տիկ. Թալին Արապաթեան՝ 96–րդ սաղմոսի ընթերցումով, երգեցողութեամբ, 4–րդ փոխասաց ընթերցումով փոխադարձաբար կարողալով, աղօթքով եւ հոգեւոր խորհրդածութիւնով՝ «**Տէրը կը հոգայ**» խորագրով, հիմնուած՝ Սաղմոս 62.5: Օրուան պատգամը մատուց Վեր. Եռսէֆ Ճապպուր: Ան վեր առաւ Առաջին Սաղմոսը եւ Գործք 13.16-25: Ան անդրադարձաւ Դաւիթ Թագաւորին կեանքի մանրամասնութեան, թէ՛ ինչպէս Աստուած վիճք ընտրեց, որպէս Վի Իր կամքը կատարէ: Մենք ալ որպէս հաւատացեալներ Աստուծոյ կամքը ինդրենք մեր կեանքերուն համար, որովհետեւ մեր ներկան ու ապագան իր ձեռքերուն մէջ է: Պաշտամունքը վերջ գտաւ յայտարարութիւններով, նուիրահաւաքումով եւ Տէրունական աղօթքով: Աւարտին տեղի ունեցաւ հաղորդակցական պահ եւ հիւրասիրութիւն:

Չորեքշաբթի 23 Յունիս, 2010–ին, Տիկնանց պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Տիկ. Կիւլէն Մէրիսօշեան՝ 19–րդ սաղմոսի ընթերցումով, երգեցողութեամբ եւ 34–րդ սաղմոսը փոխադարձաբար կարողալով եւ աղօթքով: Օրուան պատգամը մատուց Տիկ. Սոնա Հատտատ: Ան ներկայացուց «**The Purpose Driven Life**» գիրքէն հետեւեալ նիւթերը՝

«Նեղութիւններու մէջ ինչպէս փոխուիլ», հիմնուած՝ (Բ. Կորնթ. 4.17): Պաշտամունքը վերջ գտաւ յայտարարութիւններով, նուիրահաւաքումով եւ Տէրունական աղօթքով: Աւարտին տեղի ունեցաւ հաղորդակցական պահ եւ հիւրասիրութիւն:

Ք.Զ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կիրակի 20 Յունիս, 2010–ին, պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Օր. Ֆիմի Տէր Սահակեան՝ երգեցողութեամբ, աղօթքով եւ Ս. Գրային համարներու ընթերցումով: Օրուան պատգամը փոխանցեց Վեր. Վաչէ Էքմէքճեան: Ան վեր առաւ «Պաշտամունքի հասկացողութիւնը» նիւթը, հիմնուած՝ Եսայ. 6: Պաշտամունքը վերջ գտաւ նուիրահաւաքումով, յայտարարութիւններով եւ բաժանման աղօթքով:

ՀԱՅ ԱԼԵՈ. «ԱՐՄԻԱ» ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Հայ Ալեո. «Արմիա» երաժշտանոցը ունեցաւ իր ամալերջի աշակերտական համերգները յաջորդաբար, Կիրակի 13 եւ 20 Յունիս, 2010–ին, երեկոյեան ժամը՝ 6.30–ին, Հայ Ալեո. Բեթէլ Վարժարանի Փօլատեան սրահին մէջ, ներկայութեամբ՝ Վերապատուելի Համայնքապետին, հոգեւոր Հովիւներու, Հայ Ալեո. Բեթէլ Երկրորդական Վարժարանի Տնօրէնութեան, ծնողներու եւ թանկագին երաժշտասէր հիւրերու: Հանդիսութիւնը սկսաւ «Արմիա» երաժշտանոցի Տնօրէնուհի՝ Տիկ. Շողակաթ Սելիմեանի ողջոյնի եւ բացման խօսքով, որմէ ետք ան վարեց հանդէսի յայտագիրը: Ելոյթին 50 փոքրիկներ իրենց շնորհուած աստուածատուր երաժշտական կարողութիւններն ու ձիրքերը յայտնաբերեցին, ներկայացնելով երաժշտական կտորներ դաշնամուրի, ջութակի, կիթառի եւ սրինգի վրայ: Անհատական նուագածութիւններէ ետք իւրաքանչիւր դասարան ելոյթ եկաւ երգչախումբով: Համերգի արարտին Վեր. Յ. Սելիմեան բարձր գնահատեց «Արմիա» երաժշտանոցի Տնօրէնութիւնն ու ուսուցչակապը անոնց տարած բծախնդիր աշխատանքին եւ այս իւրայատուկ յայտագրի իրագործման համար: Համերգը վերջ գտաւ Վերապատուելի Համայնքապետին առաքելական օրհնութեան աղօթքով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ Հայ Ալեո. Բեթէլ Եկեղեցիի Միացեալ Ժողովին, որ հիւրասիրեց եկեղեցիին ժողովուրդը, Կիրակի 20 Յունիս, 2010–ին, քարոյի պաշտամունքէն ետք, Վերապատուելի Համայնքապետ՝ Յարութիւն Սելիմեանի, «**ՏՐԵՏԵՈՑ ԼԱՆՍԵՆ**»Ի ՈՍԿԵԱՅ ՅՈՒՇԱՄԵՏԱԼՈՎ պարգեւատրուելուն ուրախ առիթով: